Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 31-03-2021 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Զաքիյան փող., 7-3 չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.68143
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-02-09
1.5 ՀՎՀՀ-ն		02605266
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10606609
		+(374)98655601
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		advschool.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@advschool.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	15	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	131321988	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	131321988	

Նշումներ՝

Տարվա մուտքերը կազմում են 124929000 ՀՀ դրամ, որոնք գոյացել են ունկնդիրների ուսման վարձերից: Տարվա ծախսերը կազմում են 131321988 ՀՀ դրամ, որոնք գոյացել են ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից իրականացվող գործունեությունից, որը չի հանդիսանում ծրագիր

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 5 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ Digitally signed by KARAKHANYAN KRISTINE
ստորագրությունը, անունը, ազգանունը

Crowe

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՀՀ փաստաբանական դպրոց» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,

Crowe & Asatryans LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.am
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.am
www.asatryans.com

Crowe

որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու , և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արնդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն,

Crowe

ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր, առաջադրանքի պատասխանատու

22 փետրվարի 2021թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	4	107,798	123,803
Եկամուտ շնորհներից	5	13,852	28,460
Համախառն շահույթ		121,650	152,263
Աշխատանքների և ծառայությունների դիմաց հատուցումներ	6	(82,085)	(80,047)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		(17,837)	(29,907)
Ծրագրային ծախսեր		-	(3,114)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(3,307)	(3,165)
Գրասենյակային ծախսեր	7	(9,958)	(9,581)
Գործուղման ծախսեր		(777)	(3,683)
Բանկային ծախսեր		(414)	(323)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(96)	(140)
Այլ ծախսեր	8	(1,524)	(1,999)
Այլ եկամուտ	8	450	764
Գործառնական գործունեությունից շահույթ		6,102	21,068
Ֆինանսական եկամուտ	9	503	405
Այլ ֆինանսական հոդվածներ	10	102	(2)
Շահույթ մինչև հարկերը		6,707	21,471
Շահութահարկի գծով ծախս	11	(872)	(5,297)
Տարվա շահույթ/(վնաս)		5,835	16,174
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		5,835	16,174

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2021թ.-ի փետրվարի 22-ին՝

Սիմոն Բաբայան
Տնօրեն

Քրիստինե Կարախանյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	7,913	14,883
Ոչ նյութական ակտիվներ	13	46,701	56,044
		54,614	70,927
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	6,439	2,351
Դրամական միջոցներ և համարժեքներ	15	46,471	52,262
		52,910	54,613
Ընդամենը ակտիվներ		107,524	125,540
Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ		(1,380)	(7,215)
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	16	46,959	60,811
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	4,359	6,916
		51,318	67,727
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	49,880	54,538
Ընթացիկ պարտավորություն շահութահարկի գծով		589	4,176
Պահուստներ	19	7,117	6,314
		57,586	65,028
Ընդամենը պարտավորություններ		108,904	132,755
Ընդամենը հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ և պարտավորություններ		107,524	125,540

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.07.2021 13:18